ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«07» Հոկտեմբեր 2016թ. N 105

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 19 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի 91-Ա և Հայաստանի Հանրապետության թիվ 21 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի N109-Ա որոշումները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2016 թվականի հոկտեմբերի 10-ի N01/16.1/4189-16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամասիա և Բաղրամյան (էջմ.) համայնքներում համայնքի նոր ղեկավարների ընտրության կապակցությամբ համայնքապետարաններում ընդունման-հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել վեց աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2016 թվականի նոյեմբերի 2-ի
N 123 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Գևորգյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄ տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ.

Անդամներ՝

Ա. Դարբինյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ.
Յու. Մանվելյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի պետ.
Կ. Պետրոսյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ.
Ա. Պողոսյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնողներ՝

Ամասիա համայնքի նախկին ղեկավար՝ Գեորգի Մանուկյան.

Բաղրամյան (էջմ.) համայնքի նախկին ղեկավար՝ Բաբկեն Շահբազյան.

Ընդունողներ՝

Ամասիա համայնքի նորընտիր ղեկավար՝ Գարիկ Ավդալյան.

Բաղրամյան (էջմ.) համայնքի նորընտիր ղեկավար՝ Գոռ Միրզոյան:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***